

Պատմական Ակնարկ

Հայ ժողովուրդի ազգային զարթոնքի ռահվիրայ եւ հայ վիպագրութեան տիտան Րաֆֆիի անունով մկրտուած Ռումանահայերու հայրենակցական եւ մշակութային “Րաֆֆի” միութիւնը հիմնադրուած է 1920-ական թուականներուն, Ռումանիոյ հիւրընկալ մայրաքաղաք Պուրթէշի մէջ: Միութեան առաջնահերթ նպատակն էր ծառայել ռումանահայոց հինաւորոց գաղթավայրի հոգեմտաւոր արժէքներու պահպանման, վերակենդանացման ու բարգաւաճման գործին, որ միաժամանակ ազնիւ առաքելութիւն էր հայ ժողովուրդի պատմական ճակատագրի պահանջով եւ ապագայի հեռանկարով, նաեւ զարկ տալու հայկական մշակոյթին, ուսումնական կեանքին, կրթութեան եւ մարզական գործունէութեան:

Ռումանահայերու “Րաֆֆի” հայրենակցական եւ մշակութային միութեան հիմնադրման շրջանին տեղի ունեցած տեղական ժողովներու որոշումներով միութեան ղեկավար մարմինը անուանուեցաւ Խորհուրդ, որու գործունէութեան ժամանակահատուածը նշանակուեցաւ տասը տարուան անփոփոխ ժամկետով: Ղեկավար Խորհուրդի կազմի մէջ ընտրուեցան Յակոբ Քուչիկեան՝ ատենապետ, Վահէ Չուլճեան՝ փոխատենապետ, Վահան Կէմիճեան՝ ատենադպիր: Դիւանի կազմի անդամներ եղած են վաստակաշատ հայագէտ, ազգագրագէտ եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պոլսոյ “Ազատամարտ” պաշտօնաթերթի նախկին խմբագիրներէն Փրոֆ. Յակոբ Գ. Սիրունին (Յակոբ Գոլուեան), նաեւ Գէորգ Քեստանեան, միութեան երիտասարդութեան եռանդուն կազմակերպիչ եւ կողմնորոշող, ու Կ Պոտիկեան: Տեղական վարչութեան կազմի մէջ աշխատած են Սերոբ Սուրեան՝ ատենապետ, Սուշեղ Թամրազեան՝ փոխատենապետ, Վահէ Պահատրեան՝ ատենադպիր:

1930 թուականին Պուրթէշի Ռումանահայերու “Րաֆֆի” հայրենակցական եւ մշակութային միութիւնը մասնաճիւղ հիմնեց հայաշատ Քոսթանցա քաղաքին մէջ, իսկ 1936-ին փոքրաթիւ հայ բնակչութիւն ունեցող Փլոնշթ քաղաքին մէջ:

Միութիւնը 1932 թուականին ուներ ակումբի իր սեփական շէնքը՝ իր բոլոր յարմարութիւններով: Ակումբը ներդաշնակօրէն տեղադրուած էր Պուրթէշի կեդրոնը՝ համայնքային սեփականութիւն հանդիսացող տարածքի մը վրայ, ազգային հաստատութիւններու համալիրին մէջ, որ կը ներառէր Հայոց Հրեշտակապետաց Առաջնորդանիստ եկեղեցին, “Տուտեան” հայ մշակոյթի տունը/Մատենադարանը, “Միսաքեան” ազգային վարժարանը, Գեղարուեստասիրաց միութեան սրահը, խմբագրատունը, Զօրավար Անդրանիկի յուշարձանը: “Րաֆֆի” միութեան կից գործող կազմակերպութիւններ եղած են “Թատերասիրաց”, “Արարատ”, “Յառաջ” եւ “Օրիորդասիրաց” խմբակները:

Եւ իրաւամբ, միութեան հաւատաւոր ժառանգորդներու անշահախնդիր ու անսակարկ պարտքի ու ներդրումներու, անխոնջ աշխատանքի ու պատշաճ գիտակցական նուիրումի շնորհիւ տակաւին 1935 թուականին այս միութիւնը իր հայրենանուէր ձեռքբերումներու եւ պատկառելի ներդրումներու շնորհիւ իր իւրայատուկ գնահատումն ու արժեւորումը վայելեց հայկական գաղթաշխարհի պատմութեան անդաստանին մէջ: Նոյն թուականին միութեանս մասին Պոսթընի “Հայրենիք” վաստակաշատ ամսագրին մէջ հնչեցին գովասանքի, երախտագիտութեան ու օրինակելիութեան ամենաջերմ խօսքեր:

Միութեան հիմնադրութենէն ի վեր “Րաֆֆի”-ին կից արդիւնաւետ դասախօսական գործունէութիւն ծաւալած է դասախօսութիւններու խմբակը, որուն աշխատակցած են գիտական բարձր մակարդակ ունեցող մտաւորականներ եւ ռումանական բարձրագոյն հաստատութիւններու մէջ ուսանող հայազգի երիտասարդներ: Մտաւորական այդ փառանգի ներկայացուցիչներէն են հանրայայտ հայագետ, Փրոֆ. Յակոբ Գ. Սիրունի, Գեորգ Քեստանեանը, Սարգիս Սարունի՝ հասարակական գործիչ, լրագրող, Գեորգ Ղազարեանը՝ Պուրբէշի “Միսաքեան” ազգային վարժարանի տնօրէններէն, Յայաստանի Ա. Յանրապետութեան կրթութեան նախկին նախարար Սարգիս Արարատեանը՝ քիմիագետ, Յայաստանի Ա. Յանրապետութեան ելեւմուտքի նախկին նախարար Վարդան Կէմիճեանը՝ իրաւաբան, Յայ համալսարանական միութեան նախագահ, Յովհաննէս Տեւեճեանը՝ Պուրբէշի “Միսաքեան” ազգային վարժարանի նախկին տնօրէններէն, լրագրող եւ բանաստեղծ, Յայաստանի Ա. Յանրապետութեան կառավարութեան գլխաւոր վարչութեան նախկին գլխաւոր քարտուղար, Ալեքսանդր Շարաֆեանը՝ տնտեսագետ, Յայաստանի Ա. Յանրապետութեան կառավարութեան նախկին անդամ, Քոնսթանցայի հայկական վարժարանի նախկին տնօրէն, Յայր Սկրտիչ Պոտուրեանը՝ ռումանահայ հանրագիտարանի հեղինակ եւ հրատարակիչ, եւ ուրիշներ: Բանախօսութիւններուն մասնակցած են նաեւ տեղական մտաւորական հանրայայտ դէմքեր, ինչպէս՝ հայութեան մեծ բարեկամ, հայագետ Փրոֆ. Նիկոլաէ Եորգան, համալսարանի փրոֆեսէօր, քաղաքական գործիչ, նախարար, հայազգի Գրիգորէ Թրանքու Եաշը (Թրանքիլեան) եւ Լեւոն Կարապետ Պալճեանը, տարիներ անց Լուսաւորիչի Ս. Աթոռի 130-րդ գահակալ Ամենայն Յայոց Կաթողիկոս Վազգէն Ա.:

Բ. Աշխարհամարտի ավարտին Եւրոպայի մէջ տեղի ունեցած փոփոխութիւններու պատճառով ու յատկապէս համայնավար վարչակարգի հաստատման արդիւնքով Ռումանիոյ վաստակաշատ “Րաֆֆի” միութիւնը բռնի կերպով արգիլուեցաւ, եւ պատահեցաւ յռեգոյնը՝ խուճը մը նշանաւոր ռաֆֆիականներ 1944-ի Դեկտեմբերի 28-էն մինչեւ 1945-ի Ապրիլ 11-ը բանտարկուեցան եւ աննախընթաց ոճրագործութեան զոհեր դառնալով աքսորուեցան հեռաւոր Սիպերիա:

Համայնավարութեան տարիներուն ցնցուեցաւ նաեւ Ռումանահայ հիասքանչ գաղութը, որուն իբրեւ հետեւանք յաջորդեց արտագաղթը: Հազարաւոր հայեր անգամ մը եւս բնաւեր թռչունի նման ճախրեցին հեռաւոր երկիրներ եւ կայք հաստատեցին օտար ափերու վրայ, որոնց կարգին նաեւ Ա.Ս.Ն.-ի Քալիֆորնիոյ նահանգի Մեծն Լոս Անճելըս քաղաքը:

Ստեղծագործ ու շինարար, աշխատասէր, կիրթ ու կազմակերպուած ռումանահայերը, յաղթահարելով նոր երկրի բոլոր մարտահրաւերները, նախ դարձան երկրի հաւատարիմ քաղաքացիներ, ապա աստիճանաբար ստեղծեցին բարեկեցիկ ու ապահով կեանք եւ, որպէս տեսլական ունեցող ժառանգորդներ իրենց նախնիներուն, ոտքի կանգնեցուցին “Րաֆֆի” միութիւնը՝ իբրեւ ռումանահայերու վերածնունդի եւ յարատեւութեան խորհրդանիշ:

Լոս Անճելըսի նորաստեղծ Ռումանահայ գաղութը ձեռնարկեց հայապահպանման եւ ազգին ծառայելու հայրենամուէր գործունէութեան: 1963 թուականի Դեկտեմբերին, ռումանահայերը Սարգիս Սարունիի ղեկավարութեամբ հիմնեցին “Րաֆֆի” հայրենակցական եւ մշակութային միութիւնը՝ իբրեւ Քալիֆորնիոյ ոչ շահութաբեր կազմակերպութիւն: Նորաստեղծ միութիւնը հաւատարմօրէն հետեւեցաւ Պուրբէշի մէջ 1920-ական թուականներուն հիմնադրուած “Րաֆֆի” միութեան գաղափարական սկզբունքներուն:

Միութիւնը, անշուշտ, աստիճանաբար իր պատուաւոր տեղը գտնելով հայկական Սփիւռքի սիրտը դարձած ամերիկահայ գաղութին մէջ, գործելու սկսաւ շատ կարելոր ու անհրաժեշտ առաքելութեամբ, որ է՝ ու պիտի՝ ըլլայ՝

ա. գիտակցիլ հայ կեանքի մէջ իր կարելոր դերին ու նշանակութեան.

բ. հետեւիլ ազգի լուսամիտ ու հեռատես նուիրեալներու անխափան գաղափարներուն, որպէսզի սփիւռքեան ուժացնող պայմաններու մէջ հայը հայ մնայ, ապրի եւ ստեղծէ հայօրէն, միշտ պատրաստ կանգնած հայակերտումի եւ հայապահպանման պատմէշին:

գ. նպաստաբեր ու փոխադարձ լաւագոյն հասկացողութեան մէջ ըլլալ հայկական շրջապատի հետ, համագործակցիլ միասնաբար ու մէկ նպատակով.

դ. Միութեան պատասխանատու եւ կարելորագոյն խնդիրներու մէջ նկատի առնել ու համապատասխան դաստիարակչական ու քարոզչական աշխատանք տանիլ՝ առաքելութեան դրօշակակիր պատրաստելու ազգային վեհ նպատակին համար:

Խօսելով մեր միութեան հիմնադրութեան առաջին տարիներու ընթացքին ի կատար ածուած հայանպաստ եւ հպարտութեան ու արժանապատուութեան առիթներ ստեղծած իրագործումներու մասին, առաջին հերթին պիտի անդրադառնանք երեք իրագործումներու.

* 1964-ին, երբ դեռ նոր ստեղծուած էր մեր միութիւնը, ամերիկահայ դպրոցաշինութեան հարցը տարիներու պայքարէն ետք վերջապէս դրական լուծում ստացաւ: Լոս Անճելըսի մէջ պիտի հիմնադրուէր ամերիկահայ առաջին ամէնօրեայ վարժարանը, որու գոյատեւման մասին շատեր կը կասկածէին: Կը կասկածէին նոյնպէս աշակերտութեան հաւաքագրման մասին: Այդ օրերու մեր միութեան փոքրիկ հաւաքատեղիին մէջ էր, որ այս իրադարձութեան աննկուն պայքարողներու կամքին ընդառաջ երթալով, ռումանահայ հինգ ծնողներ եղան առաջինները, որոնք իրենց զաւակները արձանագրեցին ապագայ հայ դպրոցի մատեանին մէջ: Այս պատմական օրինակին հետեւեցան նաեւ ուրիշներ, եւ եօթը հայ մանուկներու հետ անոնք 1964 Սեպտեմբեր 14-ին, առաջին անգամ ըլլալով մտան “Ֆերահեան” ամէնօրեայ վարժարանէն ներս: Յիսուն երկար տարիներու սպասումէն ետք իրականացաւ երազը՝ հայկական ամէնօրեայ վարժարանի մը հիմնումը Ամերիկայի մէջ: Սոյն իրականութեան առնչուող գրանցուած փաստ է, որ Լոս Անճելըսի Ռումանահայերու “Րաֆֆի” միութիւնը մեծ դեր խաղցած է ամերիկահայ ամէնօրեայ վարժարաններու ցանցի հաստատման դժուարին գործին մէջ: Ապա, տարիներ շարունակ մեր միութիւնը, համագործակցելով դպրոցի տնօրէնութեան եւ ուսուցիչներու հետ, իր գնահատելի ներդրումը ունեցաւ՝ սատարելով դպրոցի բազում կարիքներուն:

* Լոս Անճելըս բնակութիւն հաստատած ռումանահայ փորձառու ռաֆֆիականներ, իբրեւ հիմք ընդունելով իրենց հայրենակից նախկին սկաուտներու եւ խմբապետներու ներկայութիւնը հոս, 1966 թուականին հիմնեցին “Րաֆֆի” ֆութպոլային խումբը, նաեւ 1968-ին անոնք եղան նախածեռնողները Յ.Ս.Ը.Ս.-ի Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադրութեան Արեւմտեան Ամերիկայի այս ասիերուն: Այս ալ պատմական իրադարձութիւն մըն էր, որ ոչ միայն կարելոր էր, այլեւ իր նախադէպը չէր ունեցած: Իբրեւ հետեւանք, ընդառաջելով տեղի հայ համայնքի ցանկութեան, 1968-ին Յ.Ս.Ը.Ս.-ի ստեղծումը վաւերացուեցաւ Յ.Ս.Ը.Ս.-ի Լիբանանի Շրջանային վարչութեան կողմէ: Այսպիսով ստեղծուեցաւ Յ.Ս.Ը.Ս.-ի Լոս Անճելըսի

մայր մասնաճիւղը, որ դարձաւ երաշխիքը Արեւմտեան Ամերիկայի մէջ Հ.Մ.Ը.Մ.-ական շարժումին:

* 1960-1966 թուականներուն Ռումանիոյ հայ գաղութի հանրածանօթ “Կոմիտաս” երգչախումբի շուրջ եօթանասուն նախկին երգիչ-երգչուհիներ Լոս Անճելըս հաստատուեցան: Այս ալ նկատուեցաւ լաւագոյն առիթ մը, եւ հոս ալ հիմը դրուեցաւ “Րաֆֆի” նոր երգչախումբին: Երգչախումբը ընդլայնուեցաւ եւ պահանջքները շատցան՝ չպարփակուելով մեր միութեան սեղմ հնարաւորութիւններու շրջանակին մէջ: Երգչախումբը միացաւ Հայ Երիտասարդաց Միութեան երգչախումբին, ապա “Գուսան” նոր անունով անցաւ “Համազգային”-ի հովանաւորութեան ներքոյ եւ այս բոլոր պարագաներուն՝ ղեկավարութեամբ երաժշտագէտ-փրոֆ. Արա Մանաշի:

1976 թուականին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. հովուապետական այցով Ամերիկա կը գտնուէր: Լոս Անճելըսի մէջ հանդիպում մը կազմակերպուեցաւ կաթողիկոսին եւ իր սիրելի ու հարազատ հայրենակիցներուն հետ: Հանդիպումը տեղի ունեցաւ Հոլիվուտի Սբ. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ մէջ: Ներկայ էին իր նախկին աշակերտները, ընկերները, մեծ թիւով ազգայիններ: Անմոռանալի յիշատակներով լեցուն յուզումնալից այդ հանդիպումը իբրեւ պատմական դէպք մը արձանագրուեցաւ “Րաֆֆի” միութեան տարեգրութեան մէջ:

“Րաֆֆի” միութիւնը նմանապէս իր անշահախնդիր աջակցութիւնը բերաւ “Ռոզ եւ Ալէք Փիլիպոս” ազգային վարժարանի եւ Սբ. Կարապետ Մայր եկեղեցւոյ հիմնադրութեան գործին: Մեր միութեան արհեստավարժ անդամներ իրենց անգնահատելի մասնակցութիւնը բերին վարժարանի շինարարական աշխատանքներուն: Անոնք նաեւ անդամակցեցան Սբ. Կարապետ եկեղեցւոյ Հոգաբարձական մարմիններուն, ստանձնելով պատասխանատու պաշտօններ՝ իբրեւ ատենապետներ եւ ազգային երեսփոխաններ:

Անդրադառնալով բարեսիրական եւ մարդասիրական ազգանպաստ գործունէութեան՝ մեր միութիւնը իր հնարաւորութեան սահմաններու մէջ կը մասնակցի Լոս Անճելըսի մէջ կազմակերպուող հանգանակութիւններուն եւ համահայկական թելեթոններուն: Նաեւ, կարիքի պարագային, միութիւնը մարդասիրական օգնութիւն կ’ուղարկէ Ռումանիոյ հայ համայնքի տարեցներուն եւ կարիքաւորներուն, կ’աջակցի ՀՕՄ-ի ծրագիրներուն, Հայաստանի աղէտի գօտիին, ինչպէս նաեւ բազմաթիւ ուրիշ կազմակերպութիւններու:

Ուրախութեամբ պիտի անդրադառնանք մեր միութեան կեանքին վերաբերող անչափ կարեւոր մէկ այլ իրագործումի: Տարիներու ընթացքին կատարուած հանգանակութիւններու շնորհիւ, 1992 թուականի սկզբին, Լոս Ֆելիզ թաղամասին մէջ սկսաւ գործել միութեանս առաջին սեփականութիւնը եղող կեդրոնատեղի-շէնքը: Ապա, մեզի համար նպաստաւոր շարք մը գործարքներու միջոցով, 2000 թուականին, ճիշդ Հոլիվուտի սիրտին մէջ, ձեռք բերուեցաւ նորակառոյց երկյարկանի սեփականութիւն մը, ներկայիս մեր միութեան կեդրոնատեղին, ուր կատարուած որոշ նորոգութիւններէ ու ձեւափոխութիւններէ ետք ունեցանք յարմարաւէտ հնարաւորութիւններ եւ արդիական պայմաններ՝ միութենական կեանքի առողջ եւ հեռանկարային բարգաւաճման ի խնդիր:

“Րաֆֆի” միութեան ակումբին մէջ շաբաթը անգամ մը կը գումարուին վարչութեան նիստերը, որոնք կ’ընթանան փոխադարձ գործարար հասկացողութեան մթնոլորտին մէջ: Հոն

տեղի կ'ունենան միութեան անդամական ընդհանուր ժողովները, ընկերային, կրթական, մշակութային, ինչպէս նաեւ աւանդական ձեռնարկները՝ տարեցներու հաւաքոյթներ, Մայրերու Օր, ռումանական երեկոներ, Ամանորեայ գիշերներու դիմաւորում, տեսաժապաւեններու եւ սահիկներու ցուցադրումներ, մանկական եւ երիտասարդական ցերեկոյթներ: Մեծապէս գնահատելի է “Տիկնանց” միութեան գործունէութիւնը: Մեր ժրաջան տիկիները նիւթապէս եւ բարոյապէս սատար կը կանգնին մեր բոլոր ձեռնարկներուն:

Իբրեւ հայապահպանման կարելոր ձեռնարկ, “Յոկտեմբեր Մշակութային Ամիս” խորագրի տակ դասախօսութիւններ եւ արուեստագէտներու ելոյթներ տեղի կ'ունենան, ներկայացնելով գիտական, պատմական-քաղաքական, հայագիտական եւ արուեստի ու երաժշտութեան առնչուող նիւթեր, որոնք ներկաներու մէջ կը ստեղծեն մեծ խանդավառութիւն: Նմանապէս, “Րաֆֆի” միութիւնը ամէն տարի բաւականին կազմակերպուած կ'ոգեկոչէ Մեծ Եղեռնի տարելիցը:

2004 թուականի Նոյեմբեր 13-ին Լոս Անճելըսի Ռումանահայերու հայրենակցական եւ մշակութային միութիւնը պատշաճ հանդիսութեամբ նշեց իր հիմնադրութեան 40-ամեակը: Ձեռնարկը տեղի ունեցաւ Լոս Անճելըսի “Jonathan Club”-ի մէջ՝ մասնակցութեամբ ռումանահայ սքանչելի մեր հայրենակիցներու հոծ բազմութեան: Անոնք իրենց անկեղծ ու անշահախնդիր վերաբերմունքը յայտնեցին իրենց գործօն մասնակցութեամբ, սրտաբուխ նուիրատուութիւններով եւ, իբրեւ երախտագիտութեան ու գնահատանքի արտայայտութիւն՝ յանձն առին շարունակել միութեան սրբազան առաքելութիւնը՝ ի խնդիր սփիւռքահայ մատաղ սերունդի հայեցի դաստիարակութեան եւ յարափոփոխ ժամանակի հետ քայլ պահելու հրամայականին: Ինչ խօսք, անգամ մը եւս ջերմագին խօսքեր ու շնորհակալութիւններ հնչեցին ներկայիս գործող վարչութեան անդամներու հասցէին, գնահատանքի արժանացան միութեանս նախկին բոլոր անդամներն ու վարչականները՝ իրենց անսակարկ նուիրումին եւ սփիւռքեան դժուարին ու ազգակուլ պայմաններու մէջ իրենց կատարած անձնդիր աշխատանքին համար:

Գնահատանքի, երախտագիտութեան ու շնորհակալութեան խօսքեր ըսուեցան բոլոր այն անձանց եւ պետական, կրօնական, ազգային, կուսակցական, մշակութային ու մարզական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն, որոնք մասնակից եղան մեր յորելիմական հանդիսութեան ու իրենց ջերմ, խրախուսիչ պատգամները փոխանցեցին մեզի:

Կը հաւատանք հին իմաստութեան, որ սակաւ են ընտրեալները, բայց նաեւ համոզուած ենք, որ ընտրեալներ են մեր միութեան բոլոր անդամները անխտիր եւ ընտրեալներու այդ հոծ բանակով պիտի պայքարինք անվեհեր՝ ի սպաս հայ ազգի յարատեւման եւ բարգաւաճ ապագային:

Այս առիթով ներկայ Վարչութեան կազմը կրկին պարտք զգաց շնորհակալութեան եւ երախտագիտութեան ամենաջերմ խօսքեր յղել Միութեան նախորդ շրջաններու բոլոր վարչականներուն: Անոնք բազում տարիներու ընթացքին անշահախնդիր ու անսակարկ իրենց պարտքն ու ներդրումը կատարեցին Միութեան հիմնադրութեան, գործունէութեան եւ բարգաւաճումին մէջ: Իրենց անխոնջ աշխատանքով եւ պատշաճ գիտակցական նուիրումով սատար կանգնեցան “Րաֆֆի”-ի ամրապնդումին: